ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ, 0015, ք. Երևան, Կոզիշսթի 1

№ 1342-Ա « 25 » նոյեմբերի 2025թ.

«ԵՐԵՎԱՆԻ ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՄԱՔՐՈՒՄ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՀԻՄՆԱՐԿՈՒՄ ԱՈՒԴԻՏՈՐԱԿԱՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի 2012 թվականի փետրվարի 17-ի N 143-Ն հրամանով հաստատված հավելվածի 177-րդ կետով.

1. Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ներքին աուդիտի բաժնին՝ հիմք ընդունելով Երևանի քաղաքապետի 2024 թվականի դեկտեմբերի 30-ի N 5100-Ա որոշման N 2 հավելվածը՝ 2025 թվականի դեկտեմբերի 3-ից մինչև դեկտեմբերի 30-ը ներառյալ «Երևանի աղբահանություն և սանիտարական մաքրում» համայնքային հիմնարկում իրականացնել 2024-2025թթ. կատարողականի աուդիտ:

2. «Երևանի աղբահանություն և սանիտարական մաքրում» համայնքային հիմնարկում աուդիտ իրականացնելու նպատակով ընդգրկել աշխատակազմի ներքին աուդիտի բաժնի գլխավոր մասնագետի ժ/պ Ս.Թունյանին (խմբի ղեկավար), գլխավոր մասնագետներ Ա.Ավետիսյանին, Ա.Դանիելյանին, Ս.Հարությունյանին և առաջատար մասնագետի ժ/պ Վ.Դանիելյանին:

3. Սույն կարգադրության կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ներքին աուդիտի բաժնի պետի վրա:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ